ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 154-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ - ՊՌՈ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի նոյեմբերի 11-ին հարուցված թիվ 18 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ին «ՌԱԴԻՈ-ՊՌՈ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 8-ը իրականացված մշտադիտարկման արդյունքում Ընկերության եթերում արձանագրված մեկ եթերային ժամի հաշվով գովազդի հեռարձակման տևողության խախտումը:

Ըստ 2019 թվականի նոյեմբերի 11-ի իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ Ընկերության եթերում մեկ եթերային ժամի հաշվով հեռարձակվել է գովազդ 14 րոպեից ավելի տևողությամբ՝ խախտելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Հանձնաժողովը 2019 թվականի նոյեմբերի 12-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ, ինչպես նաև խնդրել է տրամադրել արձանագրության մեջ նշված օրերի (ժամերի) եթերի հեռարձակման ձայնագրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր պատասխանում Ընկերությունը ներկայացրել է 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում եթերում հեռարձակված գովազդի մասին իրենց տեղեկատվությունը՝ համեմատելով Հանձնաժողովի կողմից արձանագրված տվյալների հետ: Ըստ Ընկերության պարզաբանման գովազդի տևողության տարբերությունները կապված են

ռադիոընկերության եթերով հեռարձակված «Ֆինանսական նորություններ» անվանումով գովազդային բնույթ կրող ռադիոհաղորդման հետ, որը հեռարձակվում է շաբաթվա բոլոր օրերին, ժամը 8:00-ից մինչև 22:00-ն ընկած բոլոր ժամային գոտիներում՝ բացառությամբ 19:00-ից 20:00-ն ընկած ժամանակահատվածը, որի տևողությունը կազմում է 1,48 րոպեից մինչև 1,73 րոպե: Ընկերության կողմից ներկայացվել են նաև եթերի ձայնագրությունները: Հաշվի առնելով ներկայացված փաստերը Ընկերությունն առաջարկում է կարճել իր նկատմամբ հարուցած վարչական վարույթը՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջները չխախտելու հիմքով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ընկերության կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքներին և համադրման արդյունքում հայտնի է դարձել, որ Ընկերության եթերով 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում հեռարձակված «Ֆինանսական նորություններ» անվանումով հաղորդումը իսկապես գովազդային բնույթ կրող ռադիոհաղորդում է, իսկ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 9-րդ հոդվածի դրույթները չեն գործում, եթե ռադիոհեռուստատեսային հաղորդումը կրում է բացառապես գովազդային բնույթ, կամ գովազդը հաղորդվում է գովազդային ալիքով:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի դրույթի խախտում չի կատարվել:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ: Եթերային ժամի հաշվարկը սկսել յուրաքանչյուր օր 00.00 ժամից:»

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Սույն հոդվածի դրույթները չեն գործում, եթե ռադիոհեռուստատեսային հաղորդումը կրում է բացառապես գովազդային բնույթ, կամ գովազդը հաղորդվում է գովազդային ալիքով:»

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 18 և 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 19 գրությունները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ՌԱԴԻՈ-ՊՌՈ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 18 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ-ՊՌՈ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

30 դեկտեմբերի 2019թ.
ք. Երևան